

Ա. Կորնթացիս 15:13-20 (1 Corinthians 15:13-20)

«Յիսուս Քրիստոսի Յարութիւնը Ամէն Բան Կը Փոխէ՛»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 04.04.96

Հետեւեցէ՛ք ինձի մինչ կը կարդամ Ա. Կորնթացիս 15:13էն մինչեւ 20  
Զատիկը կը տօնենք քանի որ Յիսուս կենդանի է: Մեր Տէրը  
յաղթանակ տարաւ մեղի, սատանային և մահուան վրայ:

Զատիկը կը տօնենք քանի որ պատմութիւնը կը հաստատէ  
իսկական պատահած դէպքեր: Մեր հաւատքը հաստատուած է  
նշարտութեանց վրայ և ո՛չ թէ առասպելներու  
կամ երեւակայութիւններու և կամ փիլիսոփայութիւններու վրայ:

Մեր հաւատքը հաստատուած է Յիսուսի խօսքերուն վրայ առաւել  
իր գործերուն վրայ - Յիսուս յարեա՛ւ մեռելներէն:

Յիսուսի յարութիւնը ամէն բան կը փոխէ՛: Մեր կեանքը կը գնայ  
փոխուիլ երբ ըմբռնենք Յիսուսի յարութիւնը: Երեւ  
նշարտութիւններ պիտի նշեմ հիմա, որոնք մեր կեանքին  
ազատութիւն կուտան: Այս նշարտութիւնները իրականութիւն են,  
քանի որ Յիսուս կենդանի է:

Առաջին նշարտութիւնը; Յիսուսի յարութիւնը կը փոխէ մեր  
անցեալը: Զենք ուզեր զայն վերյիշել: Յանախ պիտի ուզէինք  
անցեալը փոխել եթէ կարենայինք:

Մեր անցեալը կը ներուի միայն Յիսուսի յարութիւնով: Երբ մեր  
կեանքը Տիրոջ յանձնենք, մեր անցեալը կը խաչուի, Տիրոջ հետ կը  
մեռնի: Մենք յարութիւն կառնենք Տէր Յիսուսի հետ: Պօղոս  
առաջաւ կը՛սէ, «*դուք մեռած էք, և ձեր կեանքը պահուած է  
Քրիստոսի հետ Աստուծոյ իմաստով:*» (Կողոսացիս 3:3)

Երկրորդ նշարտութիւնը; Յիսուսի յարութիւնը մեր ներկայ  
կեանքը կը փոխէ: Շատերս պիտի նախընտրէինք փոխել մեր  
ներկայ վիճակը: Կարք մը անձիք պիտի ուզէին իրենց գործը փոխել  
քանի ապագայ չեն տեսներ անոր մէջ. կարգ մը ամուսնութիւններ  
տկարացած են սիրոյ մէջ նաեւ մտերմութեան մէջ: Հոգեր,  
նեղութիւններ մարդս կը յուսահատեցնեն: Կեանքը կը դառնայ  
անյոյս և ունայն:

Երկրորդ Կորնթացիս 13:4ին մէջ Պօղոս առաքեալ կըսէ թէ երբ մեր ներկայ պարագան Աստուծոյ յանձնենք, Յիսուսի յարութեան գօրութիւնը պիտի փոխէ մեր կեանքը:

Երբ անդրադարձանք թէ Յիսուս կենդանի է, և երբ Իրեն վստահինք, կը ստանանք գօրութիւն՝ դիմաւորելու ամէն մէկ օր, կ'ըլլանք յաղթական և մեր միտքն ու հոգին կը նորոգուի:

Երրորդ նշմարտութիւն; Յիսուսի յարութիւնը մեր ապագան կը փոխէ: Զատկի պատգամը կուտայ մեզի յաւիտենական յօյս և ո՛չ թէ յուսահատութիւն:

Մահամերձ մարդ մը այս ըսած է, «*ինձի համար հարց մը չէ՛ ապրիլ կամ մեռնիլ: Երբ մեռնիմ՝ Քրիստոսի հետ պիտի ըլլամ, երբ կ'ապրիմ՝ արդէն ինք իմ հետս է:*»

Յովհաննու 11:25 Յիսուս ըսաւ, «*ես եմ յարութիւնն ու կեանք: Ան որ ինձի հաւատայ, թէեւ մեռնի պիտի ապրի և ան որ կենդանի է ու ինձի կը հաւատայ, յաւիտեան պիտի չմեռնի:*»

Մեծ երջանկութիւն է տօնել Յիսուս Քրիստոսի յարութիւնը: Յիսուս մեռաւ, բայց այսօր կ'ապրի: Անոր յարութիւնը Աստուծոյ շնորհքն է՝ մեզի ամէն վայրկեան, և կը հաստատէ՝ մեր փրկութիւնը:

Զատկուայ բերած երջանկութիւնը համտեսա՞ծ ես: Ոչ թէ որ կրօնական տօն է, օր մը ուր կուգանք միատեղ Տէրը պաշտելու կամ ունենալ մեծ ընթրիք մը սիրելիներով, հապա՛ այս Աստուծոյ շնորհքն է, այսինքն յարութեան կեանքը:

Իսկական Զատիկ տօնելը միայն այն ատեն կ'ըլլայ երբ անձամբ Տէրը ընդունինք որպէս Փրկիչ: Եթէ փորձառու չես եղած այս երջանիկ յարութեան կեանքին, այսօր վստահէ՛ Յիսուսի, ընդունէ՛ զԻնք որպէս կենդանի Փրկիչ: Յանձնէ՛ Իրեն ֆու անցեալդ, ներկայդ և ապագայդ և Ան ֆու կեանքդ պիտի հեղաշրջէ՛ յաւիտեան: